

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԾԵԱՐՀՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԳՐԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ Զ.Ա. 12-7-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ:
ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ (ԲԻԱՅՆԻԼԻ,
ՈՒՐԱՐՏՈՒ, ԱՐԱՐԱՏ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրային համակարգերի ուսումնասիրության ասպարեզում վաղուց հայտնի իրողություններից մեկը, զրի ու պետականության փոխկապակցվածությունն է: Այդ կապի դրսևորման չափազանց ուշագրավ և բազմապիսի օրինակներով հարուստ է համաշխարհային պատմությունը:¹ Պետականության և գրային մշակույթի փոխադարձ կապի հետաքրքիր օրինակներ ենք հանդիպում հատկապես Հայկական լեռնաշխարհի Զ.ա. 12-7-րդ դարերի պատմության ուսումնասիրության ընթացքում, որոնք հանիրավի անուշադրության են մատնվել:

Ինքնին ուշագրավ է, որ նշված ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում կիրառվում էին հինգ գրային համակարգեր և, ցավոք, այդ կարևոր երևույթը հավուր պատշաճի դեռևս չի զնահատվել: Համառոտակի ներկայացնելով այդ համակարգերը, մեր կողմից փորձ է արվել դրանց կիրառությունը դիտարկել պետականություն-գրային մշակույթ համատեքստում:

Սկսած Զ.ա. 3-րդ հազարամյակից՝ Հայկական լեռնաշխարհի հատկապես արևելյան շրջաններում կիրառվում է Հայաստանի գծային գիրը, որի ակունքներն ակնհայտորեն Հայաստանի ժայռապատկերներն են: Բնիկ տեղական ծագում ունեցող գրային այս համակարգը կիրառվում է Հայկական լեռնաշխարհի արևելյան շրջաններում՝ մինչև Վանի թագավորության իշխանության տարածումը և ապա դուրս մղվում նշված թագավության գրային համակարգերի կողմից:² Այս գրային համակարգով ար-

ված հայտնի արձանագրություններ են Հայաստանի տասից ավելի հնավայրերից (Վան, Ելենոդորֆ, Խոջալու, Արմավիր, Յուլա-կերտ, Քուչակ, Թոեդք, Յանդղ-թեփե):³ (շուրջ 300 արձանագրություն): Նախնական հաշվարկով կարելի է ասել, որ գործածված նշանների թիվը անցնում է 400-ից, տեքստերը գրված են խառը, ամհասկանալի ուղղություններով և գիրն իր ամբողջության մեջ մնում է դեռևս անվերծանելի: Նշենք մակ, որ ծագելով ժայռագրությունից՝ այս գրերի մի մասը իրենից ներկայացնում է ժայռապատկերների պարզեցված գծապատկերներ և միջանկյալ դիրք է գրավում ժայռագրության և Վանի թագավորության (ուրարտական) մեհենագրերի միջև: Ք.ա. 12-8-րդ դարերում լեռնաշխարհի արևմուտքում՝ Եփրատի ավազանում գործածվում են խեթա-լուվիական հիերոգլիֆները, որոնց կիրառությունը սկզբնավորվել է Ք.ա. 16-րդ դարից Խեթական տերության սահմաններում: Այստեղ խեթական հիերոգլիֆները կիրառվել են սեպագրին զուգահեռ, ընդ որում սեպագիրն օգտագործել է առօրյա գրությունների համար, հիերոգլիֆները՝ կոթողային արձանագրություններում: Խեթա-լուվիական հիերոգլիֆների ծագման վերաբերյալ գիտնականների մեջ ընդհանուր ճանաչում գտած կարծիք դեռևս չկա և առավել տարածված մի տեսակետի համաձայն՝ խեթա-լուվիական հիերոգլիֆներն առաջացել են կրետական պատկերային գրից, որն իր հերթին մեծ ազդեցություն է կրել եգիպտական հիերոգլիֆիկայից: Ըստ մեկ այլ տեսակետի՝ խեթա-լուվիական հիերոգլիֆներն առաջացել են տեղական՝ փոքրասիական պատկերագրության հիման վրա, որի ծագումը ենթադրաբար թվագրվում է Ք. ա. 3-րդ հազարամյակի վերջով կամ երկրորդի սկզբով:

Խեթա-լուվիական հիերոգլիֆներով լուվիերեն արձանագրությունները տարածված են Փոքր Ասիայում, Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և Հյուսիսային Սիրիայում: Հայկական լեռնաշխարհում դրանք կիրառվել են Մելիդ (ժամանակակից Մալաթիա) և Կարքեմիշ թագավորությունների տարածքում: Մելիդը, ամենայն հավանականությամբ, մասն է կազմել Թեգարամա-Թոգարամա-Թորգոմա տուն թագավորության: Մելիդի և Կարքեմիշի բնագրերը թվագրվում են հետխեթական շրջանով՝ Ք. ա. 12-8-րդ դարերով և առաջին արձանագրությունները նոր ժամանակներում հայտնի են դարձել 19-րդ դարի երկրորդ կեսին:

Խեթա-լուվիական հիերոգլիֆային համակարգը բաղկացած է եղել շուրջ 500 նշաններից, որոնցից հնչյունային արժեքով կիրառվել են շուրջ 70-ը: Գրության ուղղությունը եղել է բուստրոֆետոն (որպես օրինաչափություն, տեքստերը սկսվում են աջից և ամեն հաջորդ տողում գրվում էր նախորդի հակառակ ուղղությամբ): Լայնորեն կիրառվում էր ակրոֆոնիայի (սկզբնահնչման) սկզբունքը, որի համաձայն գաղափարագրերը հնչյունային գրության պարագայում արտահայտում էին բառի սկզբնամասը: Շատ տարածված էր նաև «հնչյունային կոմպլիմենտի» երևույթը, որը կոչված է ճշգրտելու, թե տվյալ նշանը հատկապես իր որ իմաստով է գործածված: Հայտնի են երեք ձայնավորներ՝ ա, ի, ու: Առավել տարածված են բաց վանկերը՝ բաղաձայն-ձայնավոր կառուցվածքով, հանդիպում են նաև եռահնչյուն փակ վանկեր: Արձանագրություններում տարբերակվում են գրության երկու ոճեր՝ մոնումենտալ և արագագիր (գծային):⁴ Այսօրինակ պայմաններում, երբ լեռնաշխարհի արևելքում գործածական էին Հայաստանի գծային գրերն, իսկ արևմուտքում՝ խեթա-լուվիական հիերոգլիֆիկան, Հայկական լեռնաշխարհի հարավում աստիճանաբար հզորանում է Վանի (Նաիրի, Բիսյնիլի) թագավորությունը: Վերջինս, հին աշխարհի այն սակավաթիվ երկրներից էր, ուր երեք դար շարունակ կողք-կողքի կիրառվել են երեք գրային համակարգեր՝ տեղական մեհենագրություն, ասորեստանյան և տեղական (ուրարտական) սեպագիր համակարգեր:

Վանի թագավորության մեհենագրությունը ունի հետևյալ բնութագիրը. գրային նշանների թիվը անցնում է 300-ից, բնագրերը (որոնք մենանշանների հետ միասին կազմում են շուրջ 1350 միավոր) գրված են երկու ուղղությամբ՝ աջից ձախ, ձախից աջ: Գործածվել են օժանդակ նշաններ, իսկ գրային համակարգը ուներ բառա-վանկային բնույթ, որտեղ կիրառվում էին նաև թվանշաններ՝ իրենց արտաքին տեսքով տարբերվելով հինարևելյան բոլոր գրային համակարգերի թվանշաններից և հաստատապես ծագելով Հայկական լեռնաշխարհի ժայռագրությունից (մեկնաբանվում են 11 թվանշան):

Բիսյնական հիերոգլիֆիկայի վերծանության բանալին գտնվեց միայն 1995 թվականին, որի արդյունքում ընթերցվեցին երեք հատուկ անուններ՝ գրված տասնմեկ վանկանշանով, ինչպես նաև շուրջ հինգ տասնյակ գաղափարանշան-մեհենագրեր (շուրջ

60 հիերոգլիֆ): Մեհենագրության վերծանման արդյունքներից ելնելով (ակրոֆոնիայի սկզբունք) կարելի է հանգել նախնական այն եզրակացության, որ ուրարտական մեհենագրության լեզուն եղել է հնագույն հայերենը:⁵

Սարգուրի Առաջին արքայի օրոք (840–825թթ) արքունիքի կողմից գործածվում է ասուրա–բաբելական սեպագիրը, որով և գրի է առնվել Վանի (Տուշպայի) հիմնադրման մասին վկայող արձանագրությունը (մի քանի օրինակով): Հետագայում ասուրա–բաբելական սեպագիրը կիրառվում է միայն նրա որոշ հաջորդների երկլեզու արձանագրություններում, ընդ որում, միայն Ուրմիռ լճից հարավ–արևմուտք ընկած շրջանում (հավանաբար, Արդինի–Մուսասիրի տարածքում):⁶ Սարգուրի Ա–ին հաջորդած Իշպուհնի արքայի օրոք, Վանի թագավորությունում ասուրա–բաբելական սեպագրության բարեփոխմամբ ստեղծվեց տեղական սեպագիրը և բարեփոխումը, մինչ օրս, հավուր պատշաճի չի գնահատվել: Շուրջ 600 նշաններից բաղկացած ասուրա–բաբելական սեպագիրը, որը նշանների բազմիմաստության շնորհիվ արտահայտել է շուրջ 3000 վանկ, բարեփոխման ենթարկվելով, վերածվեց շուրջ 230 նշանից բաղկացած 300 վանկ արտահայտող համակարգի: Մոտ տասն անգամ կատարելագործմամբ բարեփոխումն իր բարդությամբ, ըստ էության, նույնն էր, ինչ նոր գրային համակարգ ստեղծելը: Յուրահատուկ էր նաև սեպանշանների արտաքին տեսքը: Եթե միջագետքյան սեպերը արտաքին տեսքով նման էին մեխերի, ապա ուրարտականը՝ եռանկյունիներ էին: Եթե ասորեստանյան գծիկները հատվում էին, ապա ուրարտականում՝ շարունակվող գծիկի փոխարեն դրվում էր նոր սեպ: Մեզ են հասել ավելի քան 600 ուրարտական սեպագիր արձանագրություններ, որոնց գրության ուղղությունը եղել է ձախից աջ: Դրանցում չի թույլատրվել տողադարձը. բառը, թերևս, որպես սրբազան հասկացություն, չէր կարելի մասնատել: Լայնորեն կիրառվել են թվանշանները:⁷

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բիայնական սեպագրությունը (զոնե արագագիր տարբերակը, որով գրվել է կավե սալիկների վրա) պետք է ստեղծված լինեին դեռևս Ք.ա. 14–13–րդ դարերում՝ ծագելով Սիտանիի ու Խեթական տեքության գրչության դպրոցներից:⁸

Ինչպիսի՞ պետական քաղաքականություն էին վարում Վանի տիրակալները գրի հարցում:

Սարգսուրի Ա-ի կողմից մայրաքաղաք Տուշպայի հիմնադրումը գրով հիշատակելի դարձնելուց հետո այդ բնագավառում նրանց առաջին ձեռնարկումը կարելի է համարել Իշպուհինի արքայի օրոք ասուրերենից ե միջագետքյան սեպագրից հրաժարումն ու բիայնական սեպագրի որդեգրումը: Գրանում, ինչպես նկատվել է վաղուց, արտացոլված է Ասորեստանի հետ խորացող հակամարտությունը Առաջավոր Ասիայում գերիշխանության համար մղված պայքարում:⁹

Բիայնական սեպագրի կիրառումից հետո ասուրերենը կիրառվում է միայն Վանի արքաների երկլեզու արձանագրություններում՝ բիայնական բնագրերը թարգմանելու համար: Ընդ որում, մեզ հասած երկու երկլեզու արձանագրությունները (Իշպուհինի ու Մենուայի թողած Զելիշինի և Ռուսա Ա-ի Թուփուզավայի) գտնվել են Ուրմիո լճի հարավ-արևմտյան շրջանից, ուր, ամենայն հավանականությամբ, գտնվել է Վանի տերության գերագույն աստված Խալդիի պաշտամունքային գլխավոր կենտրոնը՝ Արդինի-Մուսասիրը: Հետաքրքրության է արժանի մեզ հասած Արդինի-Մուսասիրի արքա Ուրզանայի կնիքը՝ ասուրերեն գրությամբ,¹⁰ մատնանշում է որ այդ տարածքում ընդունված է եղել ասուրերեն գրության ավանդույթը: Այն ի հայտ է բերում Վանի տիրակալների գրային քաղաքականության մեկ այլ հատկանշական կողմը՝ գրային ավանդույթի հարգումը հոգևոր կենտրոնում և սեփականի առաջնայնության ընդգծմամբ:

Գրային քաղաքականության մյուս բնորոշ գիծը նվաճված երկրների նկատմամբ Վանի արքաների միևնույն վերաբերմունքն էր, թե արևելքում (Հայաստանի գծային գրի նկատմամբ), թե արևմուտքում (խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի դեպքում): Նվաճված երկրների գրերով կոթողային, արքայական արձանագրություններ չեն կանգնեցվում (հասկանալիորեն՝ կապված տեղի պետական անկախության անկման հետ), սակայն դրանք շարունակվում են կիրառվել կենցաղային ոլորտում: Այդ առումով հետաքրքրական են Արմավիրից¹¹ և Ալթին-թեփե հնավայրից հայտնաբերված գրային հուշարձանները: Ուշագրավ է, որ Ալթին-թեփեում բիայնական չափի միավորները նշված են խեթա-լուվիա-

կան հիերոգլիֆներով:¹² Այսինքն՝ չկա թշնամական վերաբերմունք նվաճված երկրի գրային մշակույթի նկատմամբ: Ավելին. ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրելու, որ վերոհիշյալ երկու տարածքներում գործածված գրային համակարգերի հետ քիսայնական մեհենագրությունն ունի որոշակի փոխառնչություններ և կարելի է անգամ խոսել ազդեցությունների մասին:¹³

Ամփոփելով, արձանագրենք, որ.

ա) Բ.ա. 12–7–րդ դարերում Հայկական լեռնաշխարհում կիրառվում են հինգ գրային համակարգեր,

բ) Բ.ա. 2–րդ հազարամյակի վերջերին լեռնաշխարհի Հայաստանի արևելքում կիրառվում է դեռևս չվերծանված գծային գիրը, իսկ արևմուտքում՝ խեթա–լուվիական հիերոգլիֆիկան՝ լուվիերեն լեզվով:

գ) Բ.ա. 9–7–րդ դարերում լեռնաշխարհում տարածվում է Վանի թագավորության իշխանությունը, որի ընթացքում գործածվում է ասուրա–բաբելական սեպագիրը՝ ասուրերենով, քիսայնական սեպագիրը՝ քիսայերենով, և տեղական մեհենագրությունը, ամենայն հավանականությամբ, հնագույն հայերենով,

դ) Վանի թագավորության արքաները վարում էին ուշագրավ գրային քաղաքականություն, որի հատկանշական կողմերից էին սեփական գրագրության մեջ թշնամու գրից հրաժարումը, գրային ավանդույթի հարգումը հոգևոր կենտրոնում՝ սեփականի առաջնության ընդգծմամբ, նվաճված և տերությանը միացված երկրներում տեղական գրային մշակույթի նկատմամբ հարգալից, գոնե ոչ–թշնամական վերաբերմունք և այլն:

Նշված ժամանակաշրջանի հարուստ գրավոր մշակույթն իր հետքը թողեց հայաստանյան իրականության մեջ՝ գրային մտածողության զարգացման առումով, ինչի արձագանքները տեսնում ենք նաև հայոց ոսկեդարյան դարության բարձր մակարդակում:¹⁴

ARTAK MOVSISYAN

WRITING SYSTEMS USED IN ARMENIAN HIGHLAND DURING THE 12–7
CENTURIES (B.C.). STATE WRITING POLICY OF KINGDOM OF VAN
(BIAINILI, URARTU, ARARAT)

During the 12–7(B.C.) centuries in Armenian Highland were used five writing systems: The Liner Script of Armenian, Hittite–Luwian and Urartian hieroglyphic,

Assyro-Babylonian and Urartian cuneiform writing systems. In article are presenting general characteristics, chronologies and areas of using of these writing systems.

Author attempts as well in general outlines to show characteristic sides of state writing policy of Kings of Van (Biainili, Urartu, Ararat).

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պատահական չէ, որ քե՛ հայաստանյան առաջին պետական կազմավորման, քե՛ Հայկական լեռնաշխարհում գրի գործածության մասին առաջին տեղեկությունները վերաբերում են Բ.ա. III հազարամյակի սկզբին (Մովսիսյան Ա.Ե., Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Եր., 1992, էջ 60–62.):
2. Ա.Ե.Մովսիսյան, Հայաստանի գծային գիրը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XVIII, Ե., 1999, էջ 202–210:
3. Այստեղ հաշվի չեն առնված վաղորոնգեղարյան խեցեղենի նշանները, որոնք ուսումնասիրողների կողմից համարվում են գրեր և կամ զարդանախշեր:
4. Laroche E., Les Hieroglyphes Hittites, Paris, 1960; Дунаевская И.М., Язык хеттских иероглифов, М., 1969; Косян А.В., Лувийские царства Малой Азии и прилегающих областей, Ер., 1994, с. 8–15.
5. Մովսիսյան Ա.Ե., Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Ե., 1998:
6. Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, М., 1960, сс. 117–118, 125–131, 323–327.
7. Kōnig F.W., Handbuch der chaldischen Inschriften, I–II, Graz, 1955–1957; Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, М., 1960; Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001.
8. Дьяконов И.М., Урартские письма и документы, Л., 1963, с. 18–20.
9. Հափազանց հետաքրքիր եթովպական մի ավանդազրույց է պահպանվել հայոց գրերի ստեղծման մասին, որում նշվում է, քե հայերը վշտանալով հռոմեացիներից, որոշեցին այլևս որևէ առնչություն չունենալ նրանց հետ և հրաժարվեցին նրանց գրերից: Հայոց հոգևորականները երկար աղոթքով խնդրեցին Աստծուն և նրանից ստացան գրեր, որոնցով էլ սկսեցին գրել իրենց հավատի գրքերը (Տե՛ս Տաղավարյան Ն., Ծագումն հայ տառից, Վիեննա, 1885, էջ 37): Այստեղ ևս մենք տեսնում ենք օտար գրավոր լեզվից նրա ստեղծողի հետ թշնամության պատճառով հրաժարվելու երևույթը:
10. Shu Thureau-Dangin F., Une relation de li huitieme campagne de Sargon (714 av. J.-C.), Paris, 1912, p. XII; Дьяконов И.М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, 2, с. 321; Vanden Berge L., de Meyer L., Urartu. Een vergeten cultuur uit het bergland Armenië, Gent, 1982–1983, p. 223.
11. Արմավիրից հայտնաբերված գրակիր հուշարձաններից զոմե երկուսը, որոնք մենք ևս համարելով քիայնական մեհենագրական՝ ներգրավվել ենք մեր կազմած դիվանի մեջ (Мартиросян А.А., Аргистихинили, Ер., 1974, с. 126, 171; Մովսիսյան Ա.Ե., Վանի թագավորության..., աղ. X, Armavir–

187,193), ավելի մոտ են նախաքիայնական գծային գրերին, քան քիայնական մեհենագրերին: Տպավորություն այնպիսին է, որ քիայնական նվաճումից հետո այնտեղ շարունակվել են կիրառվել նախաքիայնական գծային գրերը:

12. Klein J.J., Urartian hieroglyphic inscriptions from Altintepe, AS, 1974, vol. 24; Laroche E., Les Hieroglyphes d' Altintepe, "Anadolu", vol. 15.
13. Սովսիսյան Ա.Ե., Վանի թագավորության..., էջ 54-55; Սովսիսյան Ա.Ե., Հայաստանի գծային գիրը, էջ 204-208:
14. Սովսիսյան Ա.Ե., Նախամաշտոցյան Հայաստանի գրերն ու դպրությունը որպես ռակեղարյան գրականության ստեղծման նախապայման, «Ոսկեդար» (տարեգիրք), 2000 (հրատ. ընթացքում):